ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 13.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/34

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.04.2018թ. թիվ 03/26-3/6139-18 գրությամբ «Սասունասար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01516603) (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 30.03.2018թ. թիվ 01/61-7109 գրության հիման վրա, 04.04.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Սասունասար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 30.03.2018թ. թիվ 01/61-7109 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/48» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի 6-րդ չափաբժնի մասով նվազագույն գնային առաջարկ էր ներկայացրել «Սասունասար» ՍՊԸ-ն, սակայն 15.03.2018թ. Ընկերության տնօրենի կողմից գրավոր դիմում է ներկայացվել Երևանի քաղաքապետարան, համաձայն որի վերջինս հրաժարվել է գնման ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով հետագա մասնակցությունից»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Գագիկ Հուրոյանը:

3. «Սասունասար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Սասունասար» ՍՊԸ-ն Խորհրդին ուղղված 11.04.2018թ. թիվ ՍԱ-ԳՀԿ/01 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ տեղի ունեցածը եղել է շփոթմունք, քանի որ նույն Բաշինջաղյան փողոցի հասցեով եղել է երկու չափաբաժին, որոնք շփոթվել են Ընկերության աշխատակցուհու կողմից:

Որպես հիմնավորում կարելի է տեսնել մնացած չափաբաժինների և այլ գնման ընթացակարգերի գնանշումները: Ընկերությունն ունի գնանշման հատուկ ծրագիր, որտեղ զետեղվում են ընթացիկ մրցույթի ծավալաթերթ-նախահաշվի ծավալները և ստացվում տարբեր մրցույթներում տարբեր տոկոսներով իջեցված թվեր, ընդ որում, իջեցված տոկոսները տատանվում են մրցութային գների 10-20 տոկոսի սահմաններում»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Անդրանիկ Ստեփանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/31 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 04.04.2018թ. թիվ 03/26-3/6139-18 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 30.03.2018թ. թիվ 01/61-7109 գրությունը և կից փաստաթղթերը, «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/48» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ««ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/48» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 07.03.2018թ. ժամը 10:00 նիստի թիվ 2, 17.03.2018թ. ժամը 10:00 նիստի թիվ 3 արձանագրությունները, Ընկերության կողմից ներկայացված հայտի պատճենը, «Սասունասար» ՍՊԸ-ի Խորհրդին ուղղված 11.04.2018թ. թիվ ՍԱ-ԳՀԿ/01 գրությամբ հայտնած դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/48» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ էր ներկայացրել նաև «Սասունասար» ՍՊԸ-ն՝ Ընթացակարգի 1-ից 8-րդ չափաբաժինների մասով:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝

• N3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/48» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովի 07.03.2018թ. ժամը 10:00 նիստի թիվ 2 արձանագրության՝

• 2-րդ կետի 2.1 ենթակետի համաձայն՝ Ընկերության կողմից Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով առաջարկած գինը կազմել է 6,996,000 ՀՀ դրամ:

• 4-րդ կետով Հանձնաժողովը որոշել է Ընկերությանը ճանաչել Ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակից՝ 6-րդ չափաբաժնի մասով:

• 5.2 կետով Հանձնաժողովը որոշել է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովը 17.03.2018թ. ժամը 11:00 նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով արձանագրել է, որ «Սասունասար» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Ստեփանյանը 15.03.2018թ. դիմում է ներկայացրել, համաձայն որի հրաժարվել է 6-րդ չափաբաժնի մասով հետագա մասնակցությունից:

Նույն կետի 1.2 ենթակետով Հանձնաժողովը որոշել է մերժել «Սասունասար» ՍՊԸ-ի հայտը 6-րդ չափաբաժնի մասով:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստին Ընկերության ներկայացուցիչը պնդեց 11.04.2018թ. թիվ ՍԱ-ԳՀԿ/01 գրությամբ ներկայացված դիրքորոշումն առ այն, որ Ընկերության կողմից գնային առաջարկները ներկայացնելիս թույլ է տրվել վրիպակ, ինչի արդյունքում երկու տարբեր չափաբաժիններ հանդիսացող՝ Բաշինջաղյան փողոցի տարբեր հասցեներում իրականացվելիք աշխատանքների համար նախատեսված գնային առաջարկները ներկայացվել են սխալ՝ մեկը մյուսի փոխարեն, այդ իսկ պատճառով էլ Ընկերությունը դիմել է Պատվիրատուին՝ հրաժարվելով Ընթացակարգի նշված չափաբաժնի մասով հետագա մասնակցությունից: Ընկերության ներկայացուցիչը խնդրեց նշված հանգամանքը համարել թյուրիմացություն և Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը

հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 8.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում՝

ա. ուղեկցող գրությամբ ներկայացնել բանկային երաշխիքի բնօրինակը.

բ. էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝ 6-րդ հոդվածի

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;

• 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից համակարգի միջոցով «Սասունասար» ՍՊԸ-ին ուղարկվել է Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստթղթերը ներկայացնելու վերաբերյալ համապատասխան ծանուցումը, սակայն պահանջվող փաստաթղթերը վերջինիս կողմից չեն ներկայացվել:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելով՝ հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելով՝ խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 5-ին մասի 1-ին կետով, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով, ինչպես նաև Հրավերի 8.13 կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.04.2018թ. գրությամբ «Սասունասար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01516603) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել:

2. «Սասունասար» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ